


ԳԱԹԱՅ

Համլետ Մարտիրոսյան
Հնագույն քաղաքակրթությունների
հետազոտման կենտրոն

Գաթան այլուրով, յուղով և խորիզով պատրաստվող խմորեղեն է, որը Հայքի տարբեր մասերում և տարվա տարբեր ժամանակներում պատրաստվում էր տարբեր ձևերով: Մատենագրության մեջ «գաթայ» բառն առաջին անգամ հանդիպում է առակագիր Վարդան Այգեկցու (13-րդ դար) «խոզը և գաթան» առակում: Դա բնական է, քանզի բառը պատկանում է նեղ յուրահատուկ ասպարեզի և դուրս է միջնադարյան մատենագրության հիմնական թեմաներից (կրոն, փիլիսոփայություն, պատմություն, գիտություն): Ուստի բառի ուշ վկայությունից չի բխում, որ գաթան ուշ ժամանակների երևույթ է:

Հայերեն «գաթայ» բառը տարածված է տարածաշրջանում (քրդերեն *kade*, *k'adä*, թուրքերեն *kete*, վրացերեն *qada*, ուտիերեն *qatä*), որոնք բոլորն էլ փոխառություն են հայերենից: Այս փաստերը վկայում են, որ գաթա թխելու օջախը Հայքն է:



Նկար 1. Մեր ժամանակներում թխվող գաթաների նմուշներ:

Որպեսզի հասկանանք, թե ովքեր են եղել առաջին գաթան թխողները և որքան հին է գաթա թխելու պատմությունը, ապա նախ պիտի հասկանանք գաթան նախշելու սովորույթի իմաստը: Հնագիտական տվյալները վկայում են, որ զոհաբերության համար նախատեսված ծիսական հացը նախշելու սովորույթը գոյություն ուներ դեռևս մ.թ.ա. 7÷6-րդ հազարամյակներում (նոր քարի դար): Ծիսական հացը նախշելու բազմաթիվ դրոշմիչներ են հայտնաբերվել Հայքի և նրան հարակից տարածքներից (Չաթալ հույուկ, Երիքով, Ջարմո և այլն): Բրոնզի դարում այդպիսի դրոշմիչներն արդեն տարածված էին ողջ Եվրասիական մայրցամաքում:




Նկար 2. Ծիսական հացը նախշելու դրոշմիչներ ա) Մեծամորից (մ.թ.ա. 3-րդ հազ.),
բ) Մարաշից ~30կմ հարավ գտնվող Դումուզ թեփե հնավայրից (մ.թ.ա. 7÷6-րդ հազ.):

Ծիսական հացը նախշելու դրոշմիչները գործածվում էին նաև որպես դրոշմակնիքներ: Այդպիսի նախշերով դրոշմիչները գործածվում են մինչև մեր օրերը: Թեև ծիսական հաց թխելու և այն աստվածներին զոհաբերելու/սվիրաբերելու սովորությունն ու ծեսը վերացավ քրիստոնեական ժամանակներում, սակայն ժողովուրդը պահպանեց նախշած հաց թխելու ավանդույթը:

Իսկ ո՞րն է հացը նախշելու իմաստը:

Նախ նշեմ, որ այն զարդանախշերը, որ գործածվել են հացը նախշելու համար, կայուն ձևով պահպանվել են հազարամյակների ընթացքում: Դրանք ի հայտ են գալիս նոր քարի դարում և գործածական են մինչ օրս: Սա արդեն ցուցիչ է, որ հաց նախշելու համար գործածվող նշանները սրբության որոշակի կարգավիճակ են ունեցել: Սրան էլ եթե հավելենք այն փաստը, որ նախշած հացը նախատեսված էր որոշակի աստվածության զոհաբերելու համար, ապա պարզ է դառնում, որ նշանները ներկայացրել են որոշակի աստվածների:

Այլ կերպ ասած, այսօր որպես նախշ ընկալվող նշանները գրեթե էին, որոնցով գաղափարագրվել են աստվածների անուններ, մակդիրներ, տիտղոսներ: Հացի վրա դաշված նշանները ցույց էին տալիս, թե որ աստծուն է զոհաբերվելու տվյալ հացը:





Նկար 3. ա) Գաթան նախշելու մերօրյա դրոշմիչներ, բ) Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի շումերական նշանագրեր:


Նկար 3ա-ում բերված են մեր ժամանակներում գաթա նախշելու դրոշմիչների նմուշներ: Նկար 3բ-ում մ.թ.ա. 4-րդ հազարամյակում շումերական գաղափարագրության մեջ գործածված նշանագրեր են: Այս պատկերների համեմատությունը ցույց է տալիս, որ իրարից ավելի քան 5000 տարվա հեռավորություն ունեցող նշանները նույնական են: Այս նշանների նախնական օրինակները հայտնի են վերին հին քարի դարում փորագրված Սյունիքի ժայռապատկերներում: Նկար 3բ-ում բերված նշանագրերից մ.թ.ա. ~3000թ ստեղծվել են սեպանշաններ, որոնց ընթերցումներն ու իմաստները վերծանվել ու հայտնի են: Դրանցով գաղափարագրվել են նաև դիցանուններ:

Մինչ այժմ օգտագործեցի «հաց նախշել» արտահայտությունը, առանց մանրամասնելու, թե հացի ինչ տեսակի մասին է խոսքը և խուսափեցի «գաթայ» բառի գործածությունից, քանզի դեռ չգիտենք, թե երբ է մարդն առաջին անգամ գաթա թխել: Սրան էլ եթե հավելենք, որ խմորեղենը նախշելու գործիքը մինչ օրս անվանում ենք «գաթանախշի» և ոչ թե «հացանախշի», ապա ակնհայտ է, որ նախշելու գործողությունը վերաբերվել է գաթային և գաթան է համարվել զոհաբերության՝ ծիսական հաց:

Այժմ տեսնենք, թե հնագույն գիր համարվող շումերերենն ինչ այլ հիշողություններ է պահպանել գաթայի մասին: Շումերերենին ենք դիմում, որովհետև գաթայի վրայի նշանները շումերներն են գործածել որպես գիր:

Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի շումերական նշանագրերի շարքում գտնում ենք մեզ հետաքրքրող նշանագիրը: Այն նախշած հացի, իմա՝ գաթայի կլոր, շեղանկյուն, քառակուսի սխեմատիկ պատկերներ է ներկայացնում:

Գաթա պատկերող շումերական նշանագիրը		Մեր ժամանակների գաթա
Ուրուկ-4 ժամանակաշրջան մ.թ.ա. 3300÷3100թթ	Ուրուկ-3 ժամանակաշրջան մ.թ.ա. 3100÷2900թթ	
		

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբում այս նշանագրից ստեղծվել է  =LU₃ սեպանշանը, որի համար վերծանվել է «թխվածք» (cake) իմաստ (աքքադերեն *kukku*) և օգտագործվել է որպես թխվածքների անվանումների դետերմինատիվ: Այդ իմաստի համար վերծանվել է սեպանշանի *gug₂/kuk₂* ընթերցում, որն էլ փոխառվել է աքքադացիների կողմից (*kukku*=«յուրահատուկ ձևի հացի տեսակ»): Սրա հայերեն զուգահեռները տեսնում ենք քաքար=«մի տեսակ խմորեղեն, գաթա» (հմմտ. անգլերեն *cake*) և բարբառային զուգուլ=«երեխաների համար թխվող փոքր հաց», կուկուլ=«փոքր կլոր հաց», գաթագուգուլ=«փոքր գաթա երեխաների համար» բառերի մեջ:

Սակայն LU₃ սեպանշանն ունի նաև GA-AD=GAD_x ընթերցում, որն արդեն ճշգրիտ հայերեն «գաթայ» բառն է (բարբառներում գաթա, գադա, կյաթա).

GA-AD = ga-ada = ga-aṭa = gada, gaṭa = գադա, գաթա
 ga-ad = ga-at = ga-aṭ = gad, gat, gaṭ = գադ, գատ, գաթ,
 որտեղ ada, aṭa, ad, at, aṭ վանկերը AD սեպանշանի համար վկայված
 ընթերցումներն են:

Բառի ընթերցման gad, gat, gaṭ = գադ, գատ, գաթ տարբերակից
 թերևս կարելի է ենթադրել, որ «գաթայ» բառի արմատն է «գաթ», որի
 նախնական իմաստը հայերենում չի պահպանվել: Այդ է պատճառը, որ
 մինչ օրս «գաթայ» բառը համարվում է չստուգաբանված: Որպես
 «գաթայ» բառի «գաթ» արմատի նախնական իմաստ, առաջարկում են
 «սուրբ, մաքուր, սրբազան» նշանակություն, հիմք ընդունելով այն
 փաստը, որ գաթան զոհաբերության համար նախատեսված սրբազան
 թխվածք է:¹ Նույն կերպ շումերերենում LU₃ սեպանշանանի gug₂/kuk₂
 ընթերցումը «թխվածք» իմաստի հետ նաև ունի «զոհ, զոհաբերություն»
 նշանակություն (աքքադերեն *niqu*):²

Շումերերենում վկայված է նաև «գաթայ» բառի վանկագիր
 գրելաձևը.

NINDA KA-DU₃ կամ NINDA KA-DU

որտեղ վերևը գրած NINDA-ն «հաց» նշանակող դետերմինատիվն է, ցույց
 է տալիս, որ իրենից հետո եկող բառը ինչ որ խմորեղենի անվանում է և
 ինքը չի ընթերցվում: Սեպագիր բառարաններում այս գրությունների
 դիմաց ևս դրվել է աքքադերեն *kukku* = «թխվածք» բառը, ինչից հետևում
 է, որ KA-DU₃ և KA-DU վանկագրությունը թխվածքի անվանումն է: KA
 սեպանշանն ունի ka, ga₁₄, ընթերցումներ, DU₃ սեպանշանը՝ da₃, du₃,
 ընթերցումներ, իսկ DU սեպանշանը՝ du, tu₃, tu₃ ընթերցումներ:

Հետևաբար, թխվածքի անվանման այս վանկագիր գրելաձևերի
 համար կարող ենք կազմել հետևյալ ընթերցումները.

NINDA KA-DU₃ = ka-da₃ = ga₁₄-da₃ = ga₁₄-du₃ = gada/kada = գադա, կաթա,
 գաթա

NINDA KA-DU = ka-du = ga₁₄-tu₃ = ga₁₄-tu₃ = gadu/kadu/gaṭu = գադա, կաթա,
 գաթա

Հիշեցնեմ, որ սեպագրական **u**-ն կարող ենք ընթերցել ա, ու, օ:

Այսպիսով, մ.թ.ա. 4-րդ հազարամյակի շումերական
 պատկերագրության և մ.թ.ա. 3÷1 հազարամյակների սեպագիր
 տվյալները վկայում են, որ հայերեն «գաթայ» բառը և աստվածներին
 զոհաբերվելիք գաթա թխելու ավանդույթն առնվազն 6000 տարվա
 հնություն ունի: Եթե սրան հավելենք նոր քարի դարի դրոշմիչների
 առկայությունը, ապա գաթան կարող է «ծերանալ» ևս 2÷3 հազար
 տարով:

Այսպիսին է «գաթայ» բառի և գաթա թխելու ավանդույթի
 հնությունը:

¹. Հայերեն *գաթ = «սուրբ, մաքուր, սրբազան» բառը կարելի է նույնացնել նույնիմաստ
 շումերերեն gada, gad, gadu, gat բառի հետ.

ga-da = GAD = *el-lum* (Proto-Aa 166:2)

որտեղ աջ կողմում աքքադերեն *ellu* բառն է, որը նշանակում է «սուրբ, մաքուր,
 սրբազան, ազնվական»: Թերևս այստեղ պիտի կցվի «ծառագործի» բարդության մեջ
 պահպանված «գործ-ի» բառը, որին վերագրվում է «պաշտելը, պաշտող» իմաստ (Հ.
 Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես՝ «գործի» բառահոդվածը):

². LU₃ սեպանշանի lu₃ ընթերցման համար բերվում է «խառնել, շաղախել» իմաստ, որը
 բացատրվում է աքքադերեն *balālu* բառով: Այս իմաստի համար LU₃ սեպանշանի lu₃
 ընթերցման հայերեն զուգահեռն է լոյծ = «փափուկ, կակուղ, հալիլուկ» բառի «լո»
 արմատը, իսկ աքքադերեն համարվող *balālu* բառը հայերեն փաղաղ = «շաղախ, խմոր»
 բառն է: